[1] Դուրս գրման ամսաթիվ		
28	Սեպտեմբեր	2018 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
28	Սեպտեմբեր	2018 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	3438108329

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[18] Լրացուցիչ տվյալներ	
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր՝ Համար: Ամսաթիվ:
[20] Մատակարարման (առաքման) եղանակը	
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55155518 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

28/09/2018 15:04:44

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

05 հուլիսի, 2018թ. ք.Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ.Աճեմյանս, վերանայելով վարույթիս թիվ 55155518 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 13:35-ին, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, թմրանյութ ապօրինի պահելու կասկածանքով, Ալավերդի քաղաքի Բաղրամյանի թաղամասից ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժին բերման են ենթարկել Ալավերդի քաղաքի բնակիչ Գագիկ Մաթևոսյանին:

Գագիկ Մաթևոսյանի անձնական խուզարկությամբ կիսաբաճկոնի աջ գրպանում հայտնաբերվել և վերցվել է թղթյա փաթեթ, որի մեջ առկա է եղել շուրջ 4,16 գրամ հաստատուն քաշով կանեփանման, չորացված, և մանրացված վիճակում գտնվող բուսական զանգված, ինչի կապակցությամբ վերջինս հայտարարել է, որ հայտնաբերվածը հանդիսանում է «կանեփ» տեսակի թմրամիջոց, պատկանում է իրեն, ինքն այն 2017 թվականի ամռանը քաղել է իր Բաղրամյան թաղամասում գտնվող այգում՝ «կանեփ» տեսակի բույսերի տերևներից, չորացրել, մանրացել և պահել է իր մոտ՝ ծխելու միջոցով օգտագործելու նպատակով:

Դեպքի առթիվ 2018 թվականի մայիսի 18-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 55155118 քրեական գործը, կատարվել հետաքննություն, իսկ մայիսի 21-ին քննչական ենթակայությամբ ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

Բացի այդ, 2018 թվականի մայիսի 28-ին՝ ժամը 21:10-ին, «Կանալ-պատնեշ հակաթմրանյութային» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԹԱՇԴՊՎ, Լոռու մարզային վարչության և բաժնի ՔՀԲ ծառայողների կողմից համատեղ, օպերատիվ տվյալներն իրացնելիս թմրանյութ ապօրինի պահելու կասկածանքով Ալավերդի քաղաքի Բաղրամյանի թաղամասից ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժին բերման են ենթարկել Ալավերդի քաղաքի բնակիչ Գագիկ Մաթևոսյանին:

Գագիկ Մաթևոսյանի անձնական խուզարկությամբ՝ հագին գտնվող կաշվե բաճկոնի աջ գրպանից, հայտնաբերվել և վերցվել է թղթյա փաթեթ, որի մեջ առկա է եղել շուրջ 9,15 գրամ հաստատուն քաշով կանեփանման, չորացված, և մանրացված վիճակում գտնվող բուսական զանգված:

Դեպքի առթիվ 2018 թվականի հունիսի 1-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 55155518 քրեական գործը, կատարվել հետաքննություն, իսկ հունիսի 4-ին քննչական ենթակայությամբ ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

2018 թվականի մայիսի 21-ին թիվ 55155118 և նույն թվականի հունիսի 4-ին թիվ 55155518 քրեական գործերը ընդունել եմ վարույթ:

2018 թվականի հունիսի 5-ին թիվ 55155118 քրեական գործը միացվել է թիվ 55155518 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է 55155518 համարի ներքո:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Գագիկ Մաթևոսյանը հաշվառված է Ալավերդի քաղաքի Բաղրամյան 8/23 հասցեում, սակայն փաստացի բնակվում է Ալավերդի քաղաքի Բաղրամյան փողոցի այգետնակում, ուստի համաձայն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հունիսի 28-ի թիվ ԼԴ/0118/07/18 որոշման, խուզարկություն է կատարվել Գագիկ Մաթևոսյանի Ալավերդի քաղաքի Բաղրամյան փողոցի այգետնակում և օժանդակ շինություններում, որի արդյունքում այգետնակում հայտնաբերվել է ընդհանուր՝ շուրջ 560 գրամ չորացված կանեփանման զանգված, կանեփանման բույսի շուրջ 1190 գրամ կիսաչորացված զանգված, իսկ այգետնակին հարակից այգուց հայտնաբերվել է կանեփանման կանաչավուն բույսի տարբեր չափսերի 657 հատ թուփ, որոնց կապակցությամբ խուզարկության մասնակից Գագիկ Մաթևոսյանը հայտարարել է, որ հայտնաբերվածը <<պլանի>> թփեր են, որոնք պատկանում է իրեն, ինքը դրանք 2018 թվականի սկզբին իր անձնական օգտագործման համար ցանել և աճեցրել է իր այգում՝ անձամբ օգտագործելու համար:

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ստացված թիվ 5/ՍՄ-390 գրության համաձայն՝ Գագիկ Մաթևոսյանը 1998 թվականից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հոգենյարդաբանական կաբինետում հաշվառման մեջ է գտնվում «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244-րդ, 246-րդ և 248-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր ՊՓԲԸ-ի փորձագետներին:

2. Փորձագետներին ներկայացնել սույն որոշման օրինակը, Գագիկ Մաթևոսյանի մեծահասակի բժշկական ամբուլատոր թիվ 156 քարտը՝ 36 թերթ, և քրեական գործի նյութերը, իսկ Գագիկ Մաթևոսյանը կներկայացվի փորձաքննության կատարման օրը:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Գագիկ Մաթևոսյանը հանցագործությունը կատարելուց առաջ, կատարման պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ, երբվանից, այդ հիվանդությունը կրել է խրոնիկ բնույթ, թե ոչ և արդյոք նա կարող էր գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը:

բ/ Հանցագործությունը կատարելու պահին Գագիկ Մաթևոսյանն արդյոք չի գտնվել հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման վիճակում և նա կարող էր այդ վիճակում գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք, թե ոչ:

գ/ Գագիկ Մաթևոսյանը մեղսունակ է, թե անմեղսունակ:

դ/ Գագիկ Մաթևոսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հաստատությունում և պայմաններում, արդյոք բուժումը հակացուցված չէ:

4. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշմամբ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նրան տրամադրված քրեական գործի, նյութերի, իրեղեն ապացույցների պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակվելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

Քննիչ՝ Վ.Աճեմյան